ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 03.04.2018թ.
ժամը 11^{00}

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ տեխնիկական ապահովման վարչության պետ, գնդապետ Հ. Կարապետյան (ԳԱՊ),
ՀՀ ԶՈՒ կապի և ԱԿՀ վարչության ՏԱ բաժնի պետի տեղակալ, փոխգնդապետ Խ. Երիցյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության ՀՕՊ, ՌԷՊ, կապի և ավիացիոն միջոցներով ապահովման բաժնի առաջատար մասնագետ Ռ. Զաղոյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան,
ՀՀ ՊՆ ՌՌ ՀՕԾ բաժնի ավագ սպա, մայոր Հ. Բարսեղյան:
Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀՇ 1-ին դասի խորհրդական Ա.Ամիրյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Ամիրյան)

1. Մասնակիցների՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված՝ հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագրի առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Մասնակիցների՝ ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Ա. Ամիրյան)

1.1 «ՌԱՖ-ՕՋԱԽ» ՍՊԸ-ի, «Էրոդավ» ՍՊԸ-ի «Տոպազ-95» ՍՊԸ-ի, «Հենրի ռադիո» ՍՊԸ-ի, «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի, «Միկրորինգ» ՍՊԸ-ի՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը, հայտով առաջարկված ապրանքների (ապրանքների) ամբողջական նկարագրերը առկա են և գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են հրավերի պահանջներին բավարարող:

«ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ հայտով առաջարկված ապրանքի ամբողջական նկարագրում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ 25-րդ չափաբաժնում (միաֆազ շարժիչներ (Բենզոագրեգատ)) ընդգրկված ապրանքի ամբողջական նկարագրում բացակայում է յուղի ցուցիչի վերաբերյալ տեղեկատվությունը:

«ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ի հայտով առաջարկված ապրանքի ամբողջական նկարագրում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ 3-րդ (հաղորդակցման մալուխներ հատուկ կիրառման համար (Մալուխ Պ-274), 6-րդ (սնուցման աղբյուրների փոխակերպիչներ (Հոսանքի փոխակերպիչ)) և 18-րդ (դյուրակիր համակարգիչներ (Համակարգիչ Notebook I5)) չափաբաժիններում ընդգրկված ապրանքների ամբողջական նկարագրերում բացակայում են արտադրման տարեթվերը: 26-րդ չափաբաժնում պոլիմերային կորպուսների քանակ նշված չէ:

«Յուտեկ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ հայտով առաջարկված ապրանքի ամբողջական նկարագրում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ 12-րդ չափաբաժնում (ռադիոընդունիչներ (Ռադիոընդունիչ) ընդգրկված ապրանքի ամբողջական նկարագրերում հաճախականության վերին տիրույթը պակաս է հրավերով պահանջվածից, ինչպես նաև բացակայում է զգայնության ցուցանիշը: Միաժամանակ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացության համաձայն «Յուտեկ» ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը կազմում էն 40 282 242 ՀՀ դրամ, ինչը պակաս է «Յուտեկ» ՍՊԸ-ի կողմից, հայտով՝ 10-րդ չափաբաժնի համար ներկայացված գնային առաջարկից:

«ՆԻԿՕ-ՏԵԿ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ հայտով առաջարկված ապրանքի ամբողջական նկարագրում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ 7-րդ (կոմուտացիոն սարք (Խտացուցիչ սարք), 14-րդ (կոմուտացիոն սարք (Խտացուցիչ սարք)) չափաբաժիններում ընդգրկված ապրանքների ամբողջական նկարագրերում բացակայում են արտադրման տարեթվերը և սարքերի գաբարիտային չափսերը:

«Կոմպասս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ հայտով առաջարկված ապրանքի ամբողջական նկարագրում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ ապրանքի ամբողջական նկարագիրը ներկայացվել է «Կամ համարժեք» արտահայտությամբ: Անհրաժեշտ էր հստակ ներկայացնել ապրանքի տեխնիկական բնութագիր:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված եզրակացության (եզրակացությունը ստացվել է 28.03.2018թ.) համաձայն բոլոր մասնակիցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն, բացի «Էրոդավ» ՍՊԸ-ից: Եզրակացության համաձայն «Էրոդավ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է 30 007 914 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություն, սակայն 30.03.2018թ. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից կրկին անգամ ստացվել է եզրակացություն՝ հետևյալ գրառմամբ. Խնդրում եմ ընդունել Էրոդավ ՍՊԸ-ի ճշտված եզրակացությունը: Համաձայն որի «Էրոդավ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություն չունի: Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով եզրակացության ճշտված տարբերակը որոշեց «Էրոդավ» ՍՊԸ-ի հայտը գնահատել հրավերի պահանջներին բավարարող:

Հաշվի առնելով վերը նշված անհամապատասխանությունները՝ 03.04.2018թ. գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել և մասնակիցներին առաջարկել շտկել անհամապատասխանությունները:

07.04.2018թ. գնահատող հանձնաժողովը շարունակեց Մասնակիցների որակավորումը հիմնավորող փաստաթղթերի գնահատման նիստը: Մասնակիցները սահմանված ժամկետում ներկայացրել են պահանջվող շտկումները: «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի, «Յուտեկ» ՍՊԸ-ի, «ՆԻԿՕ-ՏԵԿ» ՍՊԸ-ի, «Կոմպասս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված շտկումները գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են հրավերի պահանջներին համապատասխանող:

«ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված շտկումները 3-րդ, 6-րդ և 18-րդ չափաբաժինների մասով գնահատվել են հրավերի պահանջներին համապատասխանող, իսկ 26-րդ չափաբաժնի մասով ներկայացված շտկումը գնահատվել է հրավերի պահանջներին չհամապատասխանող, քանի որ մասնակցից պահանջվել էր նշել պոլիմերային կորպուսների քանակ, «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ի կողմից դրանք չեն նշվել: Հաշվի առնելով վերոգրյալը գնահատող հանձնաժողովը 09.04.2018թ. որոշեց մերժել «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ի հայտը՝ 26-րդ չափաբաժնի մասով:

«ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ի հայտը՝ 26-րդ չափաբաժնի մասով մերժելու արդյունքում, ներկայացված գնային առաջարկի հիման վրա նշված չափաբաժնում գնահատող հանձնաժողովի որոշմամբ 1-ին տեղ զբաղեցնող ճանաչվեց «Յուտեկ» ՍՊԸ-ն:

1.2 Հանձնաժողովը որոշեց առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը:

Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում չներկայացնել, քանի որ «Յուտեկ» ՍՊԸ-ն այլ չափաբաժիններով ճանաչվել էր 1-ին տեղ զբաղեցնող մասնակից և համաձայն եզրակացության, մասնակիցը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի:

1.3 Որակավորման հայտերի գնահատման նիստի ավարտի օրը՝ 09.04.2018թ., հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի, «ՌԱՖ-ՕՋԱԽ» ՍՊԸ-ի, «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ի (3-րդ, 6-րդ, 18-րդ չափաբաժիններում), «Էրոդավ» ՍՊԸ-ի, «Յուտեկ» ՍՊԸ-ի, «ՆԻԿՕ-ՏԵԿ» ՍՊԸ-ի, «Տոպազ-95» ՍՊԸ-ի, «Հենրի ռադիո» ՍՊԸ-ի, «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի, «Կոմպասս» ՍՊԸ-ի, «Միկրորինգ» ՍՊԸ-ի որակավորման հատկանիշները գնահատել

համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջիններիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակիցներ և անգործության ժամկետի ավարտից հետո մասնակիցներին պայմանագրեր կնքելու առաջարկ ներկայացնել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Ամիրյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/1» ծածկագրով ընթացակարգի նիստը հրավիրել ոչ ուշ քան, «Յուտեկ» ՍՊԸ-ի կողմից հրավերով նախատեսված փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը, ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) Հ. Կարապետյան

Գնահատող Խ. Երիցյան

Գնահատող Ռ. Զաղոյան

Գնահատող Հ. Բարսեղյան

Գնումների համակարգող՝ Ա. Ամիրյան